Հավելված 2
2024թ. Փետրվարի 07-ին
կնքված N «ԴՏՊ-1141-11018/24 ՀԿԱՐԱ» պայմանագրի

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում»<br><br>«Փոքրիկ Իշխան» ցերեկային սոցիալական կենտրոն Արտաշատ |
| Դրամաշնորհի N | *ԴՏՊ-1141-11018/24 ՀԿԱՐ* |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | *ՀՀ ԱՍՀՆ* |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | *«Հայկական Կարիտաս» ԲՀԿ* |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | *01.01.2024-31.12.2024 թթ..* |
| Հաշվետու ժամանակահատված | *01.01.2024-31.12.2024 թթ..* |
| Ներկայացման օր | *10.01.2025թ.* |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | *Արմինե Եփրեմյան/ծրագրի ղեկավար/* |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

| |
|---|
| **Համառոտ բովանդակությունը՝** «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների» տրամադրում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների և նրանց ընտանիքների կողմից արձանագրվել է դրական տեղաշարժ և մատուցված ծառայություններից մոտ **90%** բավարարվածություն:<br>Երեխաների **60%**-ն ազատ արտահայտում է իր գաղափարներն ու կարծիքը /առկա են դիտարկման թերթեր/:<br>Կրտսեր տարիքի երեխաների **80%-ը** ներգրավված են երեխայակենտրոն զարգացնող խմբակներում և գործողություններում/ մասնակիցների ցանկ/:<br>Ծնողների **35%**-ն իրազեկված են իրենց երեխաների իրավունքների մասին/գնահատման հարցաթերթ/<br>Ծնողների **40%**-ը տեղյակ է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների մասին/ գնահատման հարցաթերթ/:<br>Երեխաների **35%**-ը և ծնողների **10%**-ը ներգրավված են սոցիալական տարածքի ծրագրերում / գնահատման թերթ, մասնակիցների ցանկ, լուսանկարներ:<br><br>Հաշվետու ժամանակահատվածում ՑԽԿ-ում ընդհանուր առմամբ ծառայություն է ստացել **210 երեխա- 124 ընտանիք:**<br>Ծառայությունում ընդգրկված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների անհատական սոցիալական ծրագրերի թիվը կազմել է 210:<br>Արտակենտրոն ծառայություն ստացած կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվը կազմել է 3:<br>134 շահառու երեխաների տրամադրվել է գրենական պիտույքների փաթեթներ,<br>134 երեխաների տրամադրվել է ամանորյա նվերներ:<br><br>Երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացման նպատակով մատուցվել են որակյալ և համապարփակ սոցիալական ծառայություններ.<br>Երեխաների 70%-ը հետևում է անձնական հիգիենայի հիմնական կանոններին/ Դիտարկման թերթ, հարցազրույցներ:<br>Երեխաների 60%-ը ազատ ժամանակ ներգրավված է սպորտում ամսական 4 անգամ:<br>Երեխաների 60%-ը իր հասակակիցների նկատմամբ ցուցաբերում է հանդուրժողականություն:/ Դիտարկման թերթ, հարցազրույց/:<br>Երեխաների 60%-ը ունեն հոգեբանական և հուզական զարգացում՝ կյանքից բավարարվածություն, կարեկցանք, ինտելեկտուալ զարգացում, ճանաչողական զարգացում:<br>Երեխաների 40%-ը աջակցում են իրար միացյալ միջոցառումներ կազմակերպելու ժամանակ /Դիտարկման թերթ, հարցազրույցներ:<br>Երեխաների 60%-ը ունեն կրթական նվաճումներ՝ դպրոցական ներգրավվածություն, քաղաքացիական կյանք, սոցիալական զարգացում, դրական արժեքներ, ուսման հանդեպ նվիրվածություն և սոցիալական կարողություններ: |

Այս գործողությունների իրականացման համար մշակվել են հատուկ աշխատանքային պլաններ, յուրաքանչյուրում ներգրավված են եղել մի քանի դերակատարների խմբեր՝ ծնողներ, դպրոցի ներկայացուցիչներ, ընկերներ, դասընկերներ, դաստիարակներ, համայնքի երեխաներ և այլ սիներգիաներ:
Երեխաները սոցիալապես ակտիվ են, սովորել են վերլուծել իրենց անմիջական միջավայրում առկա տարբեր խնդիրներ, ընդգրկված են համայնքային կյանքում, նրանց նախաձեռնությամբ՝ ուղղված համայնքի խնամքին և պաշտպանությանը, զգալիորեն բարելավված է կյանքի հմտությունների որակը, հաճախում են համայնքային մշակութային օջախներ:
Շահառու 2 երեխայի կրթության իրավունքը վերականգնվել է:
Շահառու 1 երեխա ընդգրկվել է Արտաշատ քաղաքում գործող «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի «Խատուտիկ» զարգացման կենտրոն:
4 երեխա ունեն մասնագիտական կողմնորոշում, աշխատում են տարբեր հաստատություններում:
6 երեխա զբաղվում են հելյունագործությամբ, մաքրամեով, ունեն էլ. հասցեներ, կարողանում են ներկայացնել և վաճառել իրենց ձեռքի աշխատանքները:
4 երեխաներ աշխատանքի են անցել Արտաշատ քաղաքում գործող մանրածախ խանութներում որպես վաճառող:
22 երեխա հաճախում են Արտաշատի մշակույթի պալատ՝

- թատերական արվեստի խմբակ -4 երեխա
- նկարչության խմբակ - 8 երեխա
- քանդակագործության խմբակ -4 երեխա
- մաքրամեի խմբակ- 6 երեխա

Ցերեկային կենտրոնում գործող ոչ ֆորմալ կրթական դասընթացներ և խմբակներ.

- էթիկա և քաղաքավարություն՝ 210 երեխա
- սպորտ, առողջ ապրելակերպ՝ 185 երեխա
- կար ու ձևի խմբակ՝ 52 երեխա
- անգլերենի խմբակ՝ 59 երեխա
- համակարգչի խմբակ՝ 35 երեխա
- ձեռքի աշխատանք և դիզայն- 58 երեխա
- խոհարարության խմբակ՝ 48 երեխա
- պարի խմբակ՝ 24 երեխա
- հելյունագործության խմբակ՝ 32 երեխա
- նկարչության խմբակ՝ 58 երեխա

Շահառուների ծնողների 90% ընգրկված են եղել կարիքահեն դասընթացներում /ծնողավարման հմտություններ, ֆինանսական միջոցների տնօրինում և այլն/:

- մայրերի 60% ներգրավված են եղել ինքնաօջակցման խմբերում՝ քննարկումներ ներընտանեկան խնդիրների բացահայտման ու լուծման համար,
- ծնողների 60% մասնակցել են ծնողավարման հմտությունների զարգացման դասընթացներին՝ երեխաների տարիքային առանձնահատկությունները, ի՞նչ է ճգնաժամը, ճգնաժամային փուլերը, աուտիզմ և մտավոր խնդիրներ, ծնողավարման հմտություններ: Մասնակցել են ֆինանսական միջոցների տնօրինում թեմաներով դասընթացներին:

- Ծնողների և երեխաների հետ կազմակերպվել է անհատական աշխատանքներ, մասնագետների կողմից տրամադրվել է ընտանեկան խորհրդատվություն:

2 ծնող մասնակցել է կարիքահեն մասնագիտական դասընթացին, տրամադրվել է անհրաժեշտ գործիքներ:

Մասնագիտական հմտությունների ձեռքբերման նպատակով մեկ ծնող ուղղորդվել է «Մանկական զարգացման հիմնադրամ», մասնակցել է կարիքահեն մասնագիտական դասընթացին և ստացել է կարի մեքենա:

Մեկ ծնող ուղղորդվել է «Առաքելություն Հայաստան » ԲՀԿ, որի արդյունքում մասնակցել է ԵՊՀ-ի կողմից կազմակերպված «Սոցիալական աշխատանք» մասնագիտության դասընթացներին:

Ծրագրի շրջանակներում 3 երեխայի տրամադրվել է օպտիկական ակնոց, իսկ մեկ երեխայի տրամադրվել է ատամնաշարի վիրահատական միջամտության փոխհատուցում:

Արտաշատ ԲՈՒՍ-ի հետ համագործակցության արդյունքում 8 երեխայի տրամադրվել է անվճար ուղեգրատոմս:

Ծրագրի շրջանակներում շահառու 5 երեխա անցել է վեբ ծրագրավորման և խաղային ծրագավորման դասընթաց՝ Արտաշատ քաղաքի «IT Artashat» կենտրոնում:

Ցերեկային խնամքի կենտրոնում ընդգրկված են եղել 15% հաշմանդամություն ունեցող երեխաներ:

Վարքային խնդիրներ ունեցող երեխաների թիվ կազմել է 75%:

Սոցիալ-հոգեբանական խմբային աշխատանքներ հաղորդակցման հմտությունների թեմայով՝

- անհատական խորհրդատվություն և զրույցներ,
- Սոցիալ-հոգեբանական աշխատանք,
- Թեմատիկ խմբային քննարկումներ՝ հանդուրժողականության, ընկերության, առողջ ապրելակերպի, սպորտի կարևորության, անձնական հիգիենայի մասին:

Այցելություններ դպրոցներ և զրույցներ ուսուցիչների հետ երեխայի վարքային փոփոխությունների վերաբերյալ՝
հանդիպումներ դպրոցների հոգեբանների և սոց. մանկավարժների հետ, դերային խաղեր:

Անձնական ուղեկցողի ծառայությունից օգտվել է 5 երեխա:
Տրամադրված ծառայությունների արդյունքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների 60% վիճակի մեղմում, և դժվարին իրավիճակի ամբողջական հաղթահարում 40%:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան | «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն<br>Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան |
| ----------------------------------------<br>(ստորագրություն) | ----------------------------------------<br>(ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |